ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

N Ն

ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ,
ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի N 870 –Ն որոշման N1 հավելվածի 32-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել
   1) գիտական կենտրոնների ձևավորման սկզբունքները և չափանիշները՝ համաձայն N1 հավելվածի
   2) գիտական կենտրոնների ձևավորման կարգը՝ համաձայն N2 հավելվածի։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀՀ կրթության և գիտության նախարար Ս. Սեյրանյան

Հավելված N1
ՀՀ կառավարության 2008 թվականի
_____”___” N ___- Ն որոշման

ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ
ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

1. Գիտական կենտրոնների ձևավորման սույն սկզբունքները և չափանիշները մշակվել են հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթները»:
2. Գիտական կենտրոնների ստեղծման նպատակն է հանդիսանում գիտական կազմակերպությունների կողմից իրականացվող հիմնարար, կիրառական հետազոտությունների և մշակումների արդյունավետության բարձրացումը, գիտության, կրթության ու արտադրության ինտեգրումը:
3. Գիտական կենտրոնների ձևավորման սկզբունքներն են.
   1) գիտական կազմակերպությունների գիտական հետաքրքրությունների ընդհանրություն,
   2) գիտական ներուժի, նյութատեխնիկական բազայի և տարածքների համատեղ օգտագործում,
   3) գիտական ներուժի և վարչասպասարկող անձնակազմի օպտիմալացում,
   4) գիտական ներուժի արդյունավետ, նպատակային վերարտադրություն,
   5) կառավարման համակարգում ժամանակակից մենեջմենթի ներդրում,
   6) ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացում:
4. Գիտական կենտրոնների ձևավորման չափանիշներն են.
   1) համապատասխան նյութատեխնիկական բազայի և տարածքների,
   2) բարձր որակավորմամբ գիտական աշխատողների և մասնագետների, համալիր ուսումնասիրություն կատարելու կարողության,
   3) միջազգային համագործակցության փորձի,
   4) մտավոր սեփականության օբյեկտների,

5) գիտական արդյունքների ներդրման փորձի առկայություն։

5. Վերոնշյալ չափանիշները կողմնորոշիչ են գիտական կենտրոնների ձևավորման գործընթացում։

6. Գիտական կենտրոն կարող են ձևավորել Հայաստանի Հանրապետության մեկ կամ մի քանի գիտական կազմակերպություններ, բարձրագույն ուսումնական հաստատություններ, գիտաարտադրական միավորումներ և գիտական, գիտատեխնիկական, գիտակրթական գործունեություն իրականացնող այլ կազմակերպություններ։

Հավելված N2
ՀՀ կառավարության 2008 թվականի
_____”___” N ___- Ն որոշման

ԿԱՐԳ

ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում գիտական կենտրոններ ձևավորելու կարգը։
2. Գիտական կենտրոններ ձևավորելու գործընթացը համակարգելու նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) ստեղծում է գիտության պետական կոմիտեի նախագահի նախագահությամբ և Հայաստանի Հանրապետության համապատասխան նախարարությունների ու ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ներկայացուցիչներից կազմված հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)։
3. Կոմիտեն հրապարակում է գիտական կենտրոնի ձևավորման հայտի ձևը (այսուհետ՝ Հայտ)։
4. Հայտը կոմիտե է ներկայացվում Հայաստանի Հանրապետության նախարարությունների, գերատեսչությունների, Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի, ինչպես նաև՝ բուհերի, գիտաարտադրական միավորումների և գիտական,

գիտատեխնիկական, գիտակրթական գործունեություն իրականացնող այլ կազմակերպությունների կողմից։

5. Հիմք ընդունելով գիտական կենտրոնի ձևավորման սկզբունքները և չափանիշները Հանձնաժողովը եռամսյակը մեկ անգամ քննարկում է Հայտը և տալիս գիտական կենտրոն ձևավորելու նպատակահարմարության վերաբերյալ եզրակացություն։
6. Հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա կոմիտեն գիտական կենտրոն ձևավորելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն։
7. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական կենտրոնի ֆինանսավորումը կատարվում է օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տվյալ տարվա պետական բյուջեով գիտության ծախսերի համար նախատեսված ընդհանուր հատկացումների սահմաններում։

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իրավական ակտի անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները» N-870-Ն որոշման հավելված N1-ի «Գիտական կենտրոնների ձևավորման սկզբունքները, չափանիշները և կարգը» հաստատելու մասին» 32-րդ, կետի, 2007 թվականի օգոստոսի 30-ի N34 արձանագրային որոշման՝ «Գիտության ոլորտում բարեփոխումների միջոցառումների ծրագիր և ժամանակացույց» 6-րդ կետի կատարմամբ և «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթներ»-ի պահանջով։

Ներկայումս առաջնահերթ խնդիր է գիտական ներուժի արդյունավետ օգտագործման և նպատակային վերարտադրության, գիտության, կրթության, արտադրության ինտեգրման, գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունքի ապրանքայնացման և առևտրայնացման արդյունավետության բարձրացումը։

Նշված խնդրի լուծման համար անհրաժեշտ է իրականացնել կառուցվածքային բարեփոխումներ՝ հիմքում ունենալով սահմանված սկզբունքներ և չափանիշներ, որոնք կապահովեն միասնական մոտեցում գիտական կենտրոնների ձևավորման գործում։

Գիտական կենտրոններ ձևավորվելու են կամ միևնույն գիտական ուղղության գիտական կազմակերպությունների միավորման, կամ գիտական, գիտակրթական, գիտաարտադրական կոնկրետ ծրագրի իրականացման նպատակով գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից գիտական կենտրոնի ձևավորման ճանապարհով։

Արդյունքում ակնկալվում է ստեղծել գիտական կենտրոններ, որոնք կապահովեն գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետության բարձրացում։

Ս. ՍԵՅՐԱՆՅԱՆ